ԳԼՈՒԽ ԺԴ.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ. — ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆՆԵՐ

Այսպէս, Հայոց աշխարհը արեան ու կրակի մէջ էր: Իսկ ինչե՞ր էին կատարւում այդ միջոցին Բաթումում ու Թիֆլիսում:

Մայիս 11-ին, Թիւրքերի պայմաններն ստանալուց յետոյ, Անդրկ. պատւիրակութիւնը դրաւոր պնդեց Բրեստ-Լիտովսկի պայմանների վրա, և այս առթիւ սկսւեց թղթերի փոխանակութիւն Թիւրք և անդրկովկասեան պատւիրակութիւնների միջև. անդրկովկասցիք անշեղ կանգնած էին Բրեստ-Լիտովսկի պայմանների վրա, բողոքում էին այդ դաշնագրի սահմաններից դուրս ընկնող շրջանների գրաւման դէմ և պահանջում էին, բանակցութիւններին մասնակցեն նաև Թիւրքիայի դիւանակիցները. Թիւրքերը հակաճառում ու սպառնում էին:

Այս բանակցութիւնների ընթացքին, մայիս 14-ին, Թիւրքերը պահանջեցին անմիջապէս թոյլ տալ Թիւրք զօրքերին Ալեքսանդրապոլի վրայով անցնել դէպի Զուլֆա: Եւ դեռ պատասխանը չստացած, ինչպէս տեսանք, յարձակւեցին Ալեքսանդրապոլի վրա:

Բանակցութիւններն արագացնելու նպատակով, մայիս 19-ին Գերմանիայի ներկայացուցիչ զօր. Ֆոն Լոսովը առաջարկեց անդրկ. պատւիրակութեան իր միջնորդութիւնը: Անդրկովկասեան պատւիրակութիւնը, հակառակ ազրբէջանցիների վարանումին, ընդունեց ուրախութեամբ:

Յաջորդ օրը, մայիս 20-ին, Բաթում հասան Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչներ բժ. Համ. Օհանջանեանն ու Արշ. Զոհրաբեանը՝ գերման կառավարութեան հովանաւորութիւնը խնդրելու առաքելութեամբ: Մայիս 22-ին այդ խմաստով պաշտօնապէս դիմում արւեց զօր. Ֆոն Լոսովին, և այս վերջինը իսկոյն հեռագրեց Պոլսի գերման դեսպանին այդ դիմումի մասին՝ աւելացնելով միաժամանակ, որ հայ ժողովրդի վիճակը ողբերգական է և որ Թիւրքերը ձգտում են գրաւել հայկական գաւառներն ու բնաջնջել հայերին:

Մայիս 24-ին զօր. Ֆոն Լոսովը հաղորդեց անդրկովկասեան պատւիրակութեան, որ Թիւրքերը մերժեցին միջնորդութեան իր առաջարկը, իսկ մայիս 25-ի երեկոյեան, մի առանձին նամակով, յայտնեց, թէ իր ստացած ստոյգ տեղեկութիւնների համաձայն Անդրկովկասեան Հանրապետութիւնը քայքայման նախօրեակին է գտնւում, որով իր ներկայութիւնը դառնում է աւելորդ, և ինքը նոյն օրն և եթ մեկնելու է Բաթումից: